

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՊԱՏՃԷՆ

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ...

Սինոդի սրբոյ Էջմիածնի

Հանդերձեալ գոլով Տեառն յաջողութեամբ կատարել զհանդէս օրհնութեան սրբալոյս Միւռոնի ի տօնի Թաչվերացի յ 12—դում՝ աւուր ամսեան սեպտեմբերի տարւոյս ի Միածնաէջ Ս. Տաճարի, այսու կոնդակաւ մերով առաջադրեմք Սինոդիդ տնօրինել տալ գիտել զկատարմանէ օրհնութեան Ս. Միւռոնի Ամենապատիւ Պատրիարքաց Հայոց Ս. Երուսաղէմի և Կ. Պոլսոյ, համայն թեմական առաջնորդաց հայոց Ռուսաստանի և տալ հրատարակել՝ ըստ նախնի սովորութեան՝ զկատարումն օրհնութեան Ս. Միւռոնի ի գիտութիւն համայն բարեպաշտօն ժողովրդեան մերոյ։

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 21-ն Մայիսի 1910 ամի.

Թ. 1304.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ս. Միւռոնի օրհնութիւն

Ազգիս Վեհափառ Հայրապետը այս տարի Սեպտեմբերի 12–ին, Ս. Խաչի վերացման տօնին հանդերձեալ է Աստուծոյ յաջողութեամբ Ս. Միւռոն օրհնել, ուստի և յայտարարուում է ի գիտութիւն համօրէն հայոց։

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան փոխարքայ Գրաֆ. Ի. Ի. Վորոնցով Դաշկովի ծննդեան հանդիսաւոր օրուայ համար Վեհափառ Հայրապետի և պայծառափայլ Գրաֆի միջև փոխանակուել են հետևեալ հեռագրերը։

Նորին պայծառափայլութեան
Կովկասեան փոխարքայ Կոմս Վորոնցով — Դաշկովին

Մցխեթ.

Շնորհաւորելով Ձերդ Պայծառափայլութեան ծննդեան հանդիսաւոր օրը, ջերմեռանդութեամբ աղօթում եմ առ Ամենաբարձրեալն շնորհել Ձեզ կատարեալ առողջութիւն։ Օրհնելով Ձեր թանկագին կեանքը, ամբողջ հոգւովս ցանկանում եմ Ձեզ և Ձեր ընտանիքին երկարակեցութիւն և երջանկութիւն։

27 Մայիսի 1910 թ. Ս. Էջմիածին։

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

Էջմիածին

Նորին Սրբութեան Կաթուղիկոսին Ամենայն Հայոց

Ի սրտէ շնորհակալ եմ Ձեր Սրբութիւնից բարի յիշատակութեան և մաղթողական ցանկութիւնների համար ինձ և իմ ընտանիքիս։ Խնդրում եմ չթողնել Մեզ առանց Ձեր սուրբ աղօթքների։

28 մայիսի 1910 թ. Մցխեթ

ԿՈՄՍ ՎՈՐՈՆՑՈՎ.

Հայրապետական կարգադրութիւններ.

Երևանի Փոխ-Թեմական ին յայտնուեց, որ Ս. Էջմիածնի միաբան՝ Տ. Արտակ վարդապետ Սմբատեանը չէ կարող Նոր-Բայազիդի գործակալ կարգուել, որովհետև Մայր Աթոռում կարևոր պաշտօններ ունի։ 9 մայիս. թ. 1121.

Նոյն Փոխ-Թեմականին ծանուցուեց, որ գաղթական Նշան քահանայ Յովսէփեանը, որ արդէն ուսուցչութիւն է ընդունել, կարող է մնալ Ղարսի շրջանում, յատկապէս որ ժողովուրդը պոհ է։ 9 մայիս. թ. 1223.

Թոյլ տրուեց Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանի Վարչութեանը դիմել Հաղորդակցութեան Նախարարութեան՝ արտօնութիւն ձեռք բերելու աշակերտների համար՝ երկաթուղիների տոմսակագնի նկատմամբ։ 9 մայիս. թ. 1223.

Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր՝ Տ. Վահան վարդապետին պատուիրուեց անյապաղ մատուցանել Ազգիս Վեհափառ Հայրապետին ի տեսչութիւն վանքի կալուածների Կառավարութեան կանոնադրութիւնը։ 9 մայիս. թ. 1233.

Վրաստանի Թեմի առաջնորդին յանձնարարուեց միջոցներ ձեռք առնել՝ պարզելու Նադիրեանցի կտակած կարողութիւնը։ 11 մայիս. թ. 1236.

Կոնդակով տեղեկութիւն տրուեց Ժամհարեան եղբայրներին, նրանց՝ ի Տէր հանգուցեալ Մկրտիչ Ս. Կաթուղիկոսին Օգեստայում նուիրած 17,000 ռ. արժողութեամբ բենտաների գումարի մասին։ 11 մայիս. թ. 1237.

Կոնդակով պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին Մայր Աթոռի կալուածների յատակագծերն ուղարկել Երևանի Հայոց Փոխ-Թեմականին պատճէնները հանելու և հաստատել տալու համար, որ դատարաններին այդ պատճէնները ներկայացնուեն և ոչ իսկականները։ 11 մայիս. թ. 1238.

Եւրոպայի Հայոց առաջնորդին պատուիրուեց տեղե-

կութիւն հաղորդել Ազգիս Վեհափառ Հայրապետին՝ թեմի եկեղեցիների, ժամապաշտութեան եղանակի և իւր այցելութիւնների մասին։ 12 մայիս. թ. 1245։

Լուգանակի ծխական հոգաբարձութեանը յանձնարարուեց ուղարկել Նորին Սրբութեանը Փափագեանի կտակի վաւերական պատճէն։ 12 մայիս. թ. 1250։

Կոնդակով պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին արձակել Մայր Աթոռի միաբան Մկրտիչ սարկաւագ Մուրադեանին հոգևոր կոչումից՝ դասելով աշխարհականների շարքում։ 13 մայիս. թ. 1257։

Ղարաբաղի Հայոց Կոնսիստորիային պատուիրուեց կարծիք տալ Խօթայ կալուածքում գաղթականներ հաստատելու խնդրի մասին։ 13 մայիս. թ. 1261։

Տփղիսի Ներսիսեան Հոգևոր Դպրանոցի հոգաբարձութեանը տեղեկութիւն տրուեց, որ ԺԸ. դարի վերջին կաթուղիկոսների ձեռագիր սեպագրութիւնները Նորին Սրբութեան դիւանում ստացուած են և յանձնուած Մատենադարանին։ 19 մայիս. թ. 1290։

Կոնդակ Մայր Աթոռի Վանական Կառավարութեան Նախագահ՝ Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանգեանի անունով, որով Տ. Խորէն վարդապետ Լազարեանը Կառավարութեան անդամ կարգուեց։ 19 մայիս. թ. 1297։

Կոնդակով տեղեկութիւն տրուեց Ս. Էջմիածնի Սինոդին Տ. Խորէն վարդապետի Վանական Կառավարութեան անդամ կարգուելու մասին։ 19 մայիս թ. 1299։

— Տեղեկութիւն տրուեց նոյն Սինոդին, որ առաջիկայ սեպտեմբերի 12-ին, Խաչվերացի տօնին կատարուելու է Ս. Միւռոնի օրհնութիւնը և պատուիրուեց, հնարաւոր սովորութեան համեմատ, տեղեկութիւն տալ Կ. Պոլսի և Ս. Երուսաղէմի պատրիարքներին, Ռուսաստանի բոլոր թեմական առաջնորդներին և բարեպաշտ հայ ժողովրդին։ 21 մայիս. թ. 1304։

Կ. Պոլսոյ Հայոց պատրիարք Տ. Եղիշէ Ս. Աբքեպիսկոպոս Դուրեանին յայտնուեց, որ տաճկաստանցի վարդապետ-եպիսկոպոսացուներ ձեռնադրութիւնը կլինի սեպտեմբերին։ 21 մայիս. թ. 1310։

Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքին ուղարկուեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դպրոցական բաժնի տպուած ծրագրից 50 օրինակ և յանձնարարուեց կարգադրել-նախագծուշացնել Տաճկաստանի թեմական առաջնորդներին, որ առանց կանոնաւոր պատրաստութեան ըստ պահանջման ծրագրի պատանիներ չուղարկեն Հոգևոր Ճեմարանի համար։ 21 մայիս. թ. 1311։

Բագուի գործակալ Տ. Զաւէն վարդապետին գրուեց, որ Բալախանի ծխականների խնդիրը՝ Առաքել քահանայ Տէր Առաքելեանցին ժամանակաւոր հովիւ կարգելու մասին, մերժուած է, որովհետև այն քահանան կարգալոյծ է եղած Ս. Էջմիածնի Սինոդի 1905 թուի յունիսի 22-ի օրագրով։ 21 մայիս. թ. 1313։

Երջաբերական կոնդակներով պատուիրուեց Ռուսաստանի բոլոր թեմական առաջնորդներին (բացի Բեսսարաբ.) կարգադրել ծխական հոգաբարձութիւնների միջոցով, որ եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցչական խմբերը շուտով կազմուին, որպէս զի իւրաքանչիւր ուսուցչի համար պարզ լինի իւր որ դպրոցի ուսուցիչ լինելը և այլն։ 23 մայիս. թ. թ. 1329—1333։

Յանձնարարուեց պ. Դէորգ Շահումեանին, ուղարկել Վեհարանի նոր շինութեան յատակագիծն ու ճակատը և ուրուանկարը (ֆասադը)։ 23 մայիսի. թ. 1341։

Ամերիկայի Հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Պօղոս վարդապետ Գաֆթանեանին յանձնարարուեց շարունակել պաշտօնը մինչև առաջնորդի ընտրութիւնն ու հաստատութիւնը։ 23 մայիս. թ. 1344։

Կ. Պոլսոյ Հայոց պատրիարք Տ. Եղիշէ Ս. Աբքեպիսկոպոս Դուրեանին տեղեկութիւն հաղորդուեց Յովհաննէս

Կիւմիւշեանի կտակի %–ների ստացման մասին։ 23 մայիս. թ. 1346։

Կոնդակներով յորդորուեց Աստրախանի թեմի Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի դանձապետներին դանձանակագրամներ ժողովելու առթիւ և ուղարկուեց մի մի մատեան՝ ժողովուած դրամները մուտք գրելու համար։ 27 մայիս. թ. թ. 1352—1396։

Վրաստանի և Իմէրէթի առաջնորդ Տ. Գարեգին Սրբեպիսկոպոսին յայտնուեց ուղարկած 3 ձեռագիր մագաղաթեայ Աւետարանի և մի ձեռագիր խորհրդատետրի ստացման մասին։ 25 մայիս. թ. 1401։

Ս. Էջմիածնի մատենադարանապետ՝ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին յանձնուեց մատենադարանում պահելու վերոյիշեալ ձեռագրերը։ 25 մայիս. թ. 1402։

Տարօնի թեմի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Խաչատանեանին յանձնարարուեց անշուշտ ընտրել տալ Բ. Պօղոսեանի կտակով շինուելիք վարժարանի կառուցման շինարարական Մասնախումբ, համաձայն Նորին Սրբութեան կոնդակի, և ընտրութեան արձանագրութիւնն ուղարկել Նորին Սրբութեան ի հաստատութիւն։ 25 մայիս. թ. 1403։

Կոնդակներ Վրաստանի, Երևանի, Շամախու թեմական խորհրդի նախագահների անունով, որոնցով ուղարկուեց ի գործադրութիւն թեմական ժողովի պատգամաւորների ընտրութեան պարտքի և իրաւունքի ժամանակաւոր հրահանգը։ 26 մայիս. թ. թ. 1406—1409։

Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանի Վարչութեանը պատուիրուեց մատուցանել Նորին Սրբութեան մանրամասն հաշիւ՝ թէ որչափ մուտք և ծախք է եղել մինչև այժմ և որչափ է լինելու մինչև տարեսոյ յունիսի 1-ը։ 26 մայիս. թ. 1412։

Ղարաբաղի կոնսիստորիայի նախագահող՝ Տ. Եղիշէ վարդապետ Ահարոնեանին բացատրուեց, թէ Շուշու թե-

մական Հոգևոր Դպրանոցի հոգաբարձական ներկայ կազմը պարտաւոր է շարունակել իւր պաշտօնավարութիւնը մինչև նորի ընտրութիւնն ու հաստատութիւնը։ 29 մայիս. թ. 1432։

Երևանի Փոխ-Թեմական Տ. Խորէն վարդապետ Մուրադբէգեանի անունով, որով մերժուեց Ղարսի վիճակի Ջալալ գիւղի հաւատարմատարների Նորին Սրբութեանը տուած, մայիսի 28-ի, խնդիրը՝ Պալիսոյ գիւղի Յովհաննէս քահանայ Տէր Մինասեանին նրանց համար հովիւ կարգելու մասին, որովհետև քահանան արդէն կարգալոյծ է։ 29 մայիս. թ. 1433։

Կ. Պոլսոյ հայոց պատրիարք Տ. Եղիշէ Ս. Աբքեպիսկոպոս Դուրեանին յանձնարարուեց օգնել Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր Ճեմարանի շրջանաւարտներ՝ Էդուարդ Ամատունուն և Արսէն Կիտուրեանին Տաճկաց բարձրագոյն դպրոց ընդունուելու համար։ 29 մայիս. թ. 1434 և 1435.

Կոնդակով հրահանգութիւն տրուեց Ս. Էջմիածնի Սինոդին Մայր Աթոռի գիւղերի կալուածների, հարկերի և այգեհարկերի վերաբերմամբ։ 30 մայիս. թ. 1438։

Կոնդակով պատուիրուեց նոյն Սինոդին առանձին ցուցակ պահել այն գործերի համար, որոնք յանձնուում են Մայր Աթոռի փաստաբանին դատ վարելու առթիւ։ 30 մայիս թ. 1439։

Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գարեգին Աբքեպիսկոպոսին յետ ուղարկուեց նոր վեհարանի շինութեան յատակագիծ ուրուանկարը և պատուիրուեց ճարտարապետների և գեղարուեստագէտների քննութեան ենթարկել յատակագծի—ուրուանկարը (ֆասադը) և արդիւնքը շուտով ներկայացնել Նորին Սրբութեան։ 31 մայիս. թ. 1441։

Հայրապետական զոհունակութիւն եւ օրհնութիւն:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Մելիտոպոլցի պ. Գէորգ Կարամուրզայեանի անունով՝ նրա կազմած և ուղարկած կտակի առթիւ։ 12 մայիս. թ. 1252։

— Օրհնութեան Երևանի Թեմական Խորհրդի անդամների անունով՝ նրանց գործունէութեան համար։ 17 մայիս. թ. 1283։

— Օրհնութեան Տագանրոգ քաղաքացի Սերովբէ և Եղիա Օտաբաշեանց եղբ. անունով՝ տեղական եկեղեցուն և ծխական դպրոցի շինութեան 20000 ռուբ. աւելի նուիրաբերութեան համար։ 23 մայիս. թ. 1320։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Մայիսի 10-ին Սինոդը, լսելով Ղարաբաղի կոնսիստորիայի յայտարարութիւնը՝ որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի կոնսիստորիային ընդունել Նուխու գաւառի Դեօգբուլաղ գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր-Մեսրոպեանին հոգևոր կոչման մէջ նոյն գիւղի համար քահանայ ձեռնադրելու և առաջադրել Շամախու թեմի առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսին ձեռնադրել նրան։ № 293։

Մայիսի 12-ին Սինոդը ինկատի ունելով՝ որ Մուխրանեան փողոցում եղած տունը կտակով նուիրած է և չէ կարելի այն օտարացնել, այլ միայն փոխել ուրիշ անշարժ կայքի հետ, ուստի որոշեց լիազօրութիւն տալ Տփխիսի էջմիածնական կալուածների կառավարիչ Եփրեմ վարդապետին բանակցելու Թիֆլիզի քաղաքային վարչութեան հետ՝ յիշեալ կալուածքը Պապկովի տան հետ փոխարինելու մասին, պայմանաւորուելով, որ այդ տան ճակատները բաց հրապարակի վրայ լինին։ № 301։

—12-ին Սինոդը որոշեց. հաստատել էջմիածնական Մեհրապ—Քիւրդ—Քեանդ և Թափարաշ գիւղերը կապալով տալու համար կապած պայմանը նոյն գիւղերի հաւատարմատարների անունով հինգ տարի ժամանակով տարեկան 714 ռուբլիով։ № 303։

—17-ին Սինոդը որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին տալ Ճեմարանի վարչութեան բժ. Տիդրա-